

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

21.602

33c

41-58

15 JAN 2010

330
T-72

Հայոց

ՊՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԸՆՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀԱՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. ՀՅՈՒՄ. ԿՈՎԱՅԻ ՅԵՐԿՐԱՑՅԻ, ԿՈՄԻՏԵՅԻ
ՊԱՅՄԱՆՈՒՄ ՀԱԿ. Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎԻ ԱՐՏԱՎԱՐՈՇ ՀԱՌԵ

1930 թ. Դեկտեմբերի 1-ին

308(47)
4x58

ՀԱՅԱՍՏԱՆԻ
MINISTRYA
NARODNOY KULTURE
Nauchnoye Izdatelstvo
SSSR

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԿԱ

1931 թ.

ԱԽՈՏԱԼ ԳԱՅ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՑԱՌՎՈՒՄ* ԵՆ

1. Ա. Անդրեյիս. — Սոցիալիստական շինարարության նոր եռապը	6 հ.
2. Խուռեյիս. — Կուլտակի կոլխոզի քչնամբ	5 հ.
3. Դրևագանտեսական կոմունայի կանոնադրություն	2 հ.
4. Ասոյին. — Պատասխան ընկեր կոլխոզի կիներին	5 հ.
5. Մ. Գիգայան. — Կոլխոզների մասին	6 հ.
6. Վ. Բվանով. — Նոր հասարակ	5 հ.
7. Դրևագանտեսական արտելի կանոնադրություն	2 հ.
8. Ինչ աշխատանքը կոլխոզում	8 հ.
9. Ա. Անդրեյիս. — Հյուս, Կովկ. գյուղատնտեսության սոցվերական ուղղակի թվականները	2 հ.
10. Խալջին. — Խնչպիս կազմակերպել և վարել կաթնահանուսությունը կոլխոզներում	8 հ.
11. Ա. Անդրեյ. — Սոցիալիստական շինարարության զոտում	8 հ.
12. Հյուս, Կովկ. Յարկու ծխախոսադուժության միաւթյան պիմումը	2 հ.
13. ՀԿ(Ք)Կ ԿԵՆՏՐՈՆԻ աշխատանքը (ընկե. Պորոշինովի ղեկուցումը)	15 հ.
14. Ա. Հովհաննիսիան. յերդ մարտական փորձի (բանասեղծությունները)	20 հ.
15. Հյուս, Կովկ. յերկրային 6 կուսկոնքերնցիսի բանաձները	8 հ.
16. Զարգացրել կենցանարությունը կոլխոզներում	15 հ.
17. Յեղիպտացորներ կուլտուրան 2. կ.	6 հ.
18. Միկուլա. — Փետր նոր կենցաղը կոլխոզներում	5 հ.
19. Ակնօրովիում. — Պաշտպանեցներ անառունդերին վարակումից	5 հ.
20. Պոլգովսկի. — Առաջին սպնություն հիվանդացած դյուդ. կենացներին	6 հ.
21. Հնդայակի յերբորդ տարվա շեմքին	16 հ.
22. Դրևագանտեսական միասնական հարկը և գ. ա. սոց. վերակառուցումը	10 հ.
23. Օս. Տելին. — Խնչպիս կազմակերպել խոշոր կոլխոզի անունությունը և նրա վարչությունը, Ե-ին պրոկի	8 հ.
24. Նույնը, 2-րդ պրակ	4 հ.
5. Նույնը 3-րդ պրակ	7 հ.
9. Ա. Գ. Բառանչյան. — Անասնաբուժական կոլխոզի և նրա մասնաճյուղերի կոռավարումը	20 հ.

330
4-58

25 SEP 2006 CA 32-106

1 DEC 2009

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀԱՌ, ԿՈՄ. ԿՈԽ. ՀՅՈՒ. ԿՈՎԻ. ԿՈՎԱԿՈՒ ՅԵՐԿՐՈՑԻՆ ԿՈՄԻՏԵՑԻ
ԳԼԵՆՈՒՄՈՒՄ ՀՆԿ. Ա. Ա. ԱՆԴՐԵԵՎԵՎԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՁԱԽԸ
1930 թ. ԴԵԿԵMBERԻ 1-ՐՆ

ԳԱՅԼՈՏԵԿԱ
Института
Востоконебесной
Плодородии Наук
СССР

Թարգմ. Մ. Փիր.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ 1931 թ. ԽՈՍՀԿ. ԴՈՒ

А. А. НДРЕЕВ

Задачи культурного строительства

60543-67



На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
МОСКВА РОСТОВ-ДОН

Ростов-Дон Крайлит № А-1337 заказ № 1302 Газетно книжн. тип
СККПО тираж 1500

Կուլտուրական շինարարության հարցի շուրջը յեղած վիճաբանությունից յելնելով և նկատի ունենալով գեպի այդ հարցը յեղած ընդհանուր վերաբերմունքը, ինձ թվում ե, վոր այդ հարցը գեռ ևս հարկ յեղած ուշադրության չի արժանացել և շատ ընկերների համար բավարար չափով հասկանալի չե: Իսկ իրականում մենք փորձ ենք անում քննության դնել կուլտուրական շինարարության ծայր աստիճանի կարևոր ու հասունացած ինդիքը:

Ինչու կուլտուրական շինարարության հարցը այժմ վերին աստիճանի կարևոր հարց ե: Դա նրա համար, վոր այժմ, վերակառուցման շրջանը վոտք դնելով մենք զգում ենք, թե վորքան վնասներ ենք կրում կուլտուրայի անբավարար լինելու հետևանքով: Բազմաթիվ դժվարություններ կուլտուրական շինարարության անբավարարությունից են առաջ գալիս: Այս հարցը հասունացած ենակ այն պատճառով, վոր մեղանում կուլտուրական շինարարության տեմպերը չեն համապատասխանում արդյունաբերության վերակառուցման ու գյուղատնտեսության զարգացման տեմպերին: Մենք այս չենք կարող հանդուրժել կուլտուրական շինարարության տեմպերի այսպիսի յետամացություն ժողովրդական տնտեսության վերակառուցման տեմպերից, վորովհետեւ, կրկնում եմ, դրա

պատճառով մենք շատ ենք կորցնում և մեր սոցիալ-խստական շինարարությունը շատ և դժվարանում:

Ինչու կուլտուրական շինարարության ասպարիզում մենք կարող ենք ավելի համարձակ առաջ գնալ ու այս հարցը ավելի վճռական դնել: Մենք նյութապես ամրապնդվել ենք, այժմ կուլտուրական կարիքներին ու կուլտ-շինարարության ավելի կարող ենք միջոցներ հատկացնել, քան այդ կարող եյինք անել անցյալում: Նյութական կողմը մեզ այժմ ավելի քիչ ե կաշկանդում, քան առաջ, յերբ մենք ամեն ինչի, նաև կուլտուրայի վրա կոպեկներ եյինք ինայում, վորպեսզի ծանր ինդուստրիայի և մեքենայական արդյունաբերության համար ծախսումներ կարողանացինք անել: Այժմ, պրոլետարական հեղափոխության 14-րդ տարում մենք նյութական այնպիսի պայմաններումն ենք գտնվում, փոր կուլտ-շինարարության կարիքների վրա ավելի միջոցների ծախսումներ ել կարող ենք թույլ տալ:

Ինչու կուլտ-շինարարության հարցերը այսպես սրվել են. ինչու այդ հարցը լայն ու վճռականորեն ենք դում: Նրա համար, ընկերներ, փոր սոցշինարարության ֆրոնտը լայն ֆրոնտի յե վերածվել: Յեթե առաջ մեր ուժերը կենտրոնացնում եյինք արդյունաբերական շինարարության վրա և գիխավորապես հին արդյունաբերությունը վերականգնելու վրա, ապա այժմ, վերակառուցման շրջանում, արդյունաբերական շինարարության ֆրոնտը անսովոր կերպով լայնացել ե: Մեր ֆրոնտը տարածվել ե նաև գյուղատնտեսական հսկայական սեկտորի ներառմամբ: Իսկ գյուղատնտեսության հետ մենք առաջ կապված եյինք

ապրանքային հարաբերությունների կարգով միայն: Մեր ընդհանուր սոցշինարարությունը աճել ե և զրահամապատասխան աճում են նաև կուլտուրական ուժերի, կազմակերպիչների, տեղերի կուլտուրականության և այլ պահանջները: Սրանից ե առաջ գալիս կուլտուրայի հարցերի սրացումը, վոչ թե կուլտուրայի, ընդհանրապես նրա լայն ըմբռնումով (ուր մըտնում են զրականության ու արվեստի հարցերն ես), այլ հատկապես այն կուլտուրան, վորը մեր սոցիալ-խստական արտադրության համար ե պետք. խոսքս գործնական կուլտուրայի մասին ե: Սոց. աշխատանքների ֆրոնտի լայնանալու պատճառով այժմ այդպիսի կուլտուրայի պակասություն ե զգացվում:

Կուլտ-շինարարության հարցը բարդանում ե վերակառուցման ետապով, վորն արմատապես տարբերվում ե ժողովրդական տնտեսության նախորդ, վերականգնման շրջանից: Արդյունաբերությունը վերակառուցվում ե տեխնիկական նոր հիմունքների վրա, զյուղատնտեսությունը վերաստեղծվում ե նոր, սոցիալիստական հիմունքների վրա: Վերակառուցման շրջանի եյությունը սրանումն ե կայանում և սա յել եր հերթին բարդացնում ե կուլտուրական շինարարության խնդիրը:

Կուլտ-շինարարության խնդիրը բարդացնող յերկը ըստ մոմենտ՝ դա մեր տնտեսության տեխնիկայի դեկավարության մեջ աշխատող բուրժուական ինտելիգենտ-մասնագետների վորոշ մասի բացահայտ գավաճանությունն ու լայն վասարարությունն ե: Միջազգային իմպերիալիզմի քաղաքականությունը կիրառող բուրժուական մասնագետների այդ խմբակն այնքան

մեծ եր, վոր սնում եր մեր արդյունաբերության բար բջիջները, տեղ եր գտել արդյունաբերության բոլոր ճյուղերում, Խորհրդային Միության բոլոր մասերում, հանրապետություններում։ Այժմ դա հայտնաբերված է ու հիմնականում վերացված։ Այս պարագան առանձնահատուկ ուժ է տալիս մեր ուժերով, այսինքն պրոլետարական մասսաների, կոլտնտեսականների և նրանց անմիջական կազմերի կողմից կուլտուրական տեխնիկան տիրապետելու խնդրին։

Մասնագետների այն շերտը, վորի վրա մենք հենվում ենք տնտեսական շինարարության տեխնիկայի ասպարիզում, մասնագետների այդ հին շերտն անբավարար է և բացի դրանից, նա վերակառւցման շրջանի, նոր տեխնիկայի վերելքի և սոցշինարարության զարգացման շրջանի առաջադրած պահանջները չափազանց դանդաղկոտությամբ ե ընդունում։ Այս փաստը նույնպես բարդացնում է կուլտշինարարության հարցը։ Սրանից բղխում ե այն, վոր նախորդ շրջանի համար յեղած դրույթը, այն և մասնագետների աշխատանքը չխանգարել և նրանցից սովորել՝ արդեն անբավարար ե, վորովհետև վատ ե այն տնտեսավարը, վորը միայն բավարարվում է մասնագետների աշխատանքը չխանգարելով։ Վհչ, տնտեսավարն այժմ պետք է մասնագետին ստուգի, նրան զեկավարի, ակտիվ դեկավարություն ունենա աշխատանքների վրա։ Յես արդեն ասացի, վոր տնտեսավարների մի մասը չարաշահում եր, ավելի յերկարացնում «մասնագետին աշխատել չխանգարելու» շրջանը, անասելի դանդաղ եր սովորում և շատ քիչ բան եր սովորել աշխատանքի անմիջական դեկավարության տեսակե-

տից։ Դրա համար ել կուլտ-շինարարությունը այժմ ավելի քան յերբեք, բարդանում եւ,

կուլտուրական շինարարության հարցերը բարդանում են զեկավարության բոլոր ճյուղերում, արդյունաբերության, դյուզատնտեսության, խորհրդային ավարատի և այլ ճյուղերում։

Մեր առաջ հարց է դրված՝ կուլտուրական տեսակետից մի քանի աստիճան բարձր կանգնել Այս կամ այն ճյուղում զեկավարություն ցույց տալ այժմ հնարավոր չե, յեթե տեխնիկայի, գիտության յուրացման ու ըմբռնման տեսակետից բարձր կանգնած չենք։ Ահա թե ինչու շինարարության խնդիրները հիմնական պիտի դառնան, անմիջական լուծումն ու պատասխան ստանան։

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակը արագցնող հիմնական պայմանների մասին յեթե խոսենք, ապա, հավանաբար, հիմնական պայմանը կկայանան րանում, թե կկարողանանք արդյոք մոտակա շրջանում մեր կազմերը, վոչ միայն մեր կազմերը, այլ և սոցիալիստական շինարարության մասնակցողների վողջ մասսան, գրագիտության, տեխնիկական գիտությունների յօւրացման ու կուլտուրականության տեսակետից մի քանի աստիճան վեր հանել։ Այժմ դա հանդիսանում է հիմնական պայման, վորովհետեւ սոցտնտեսության կառուցման բոլոր այլ տարրերը մենք արդեն ունենք։ Մենք գիտենք, վոր մեր քաղաքականությունը—կուսակցության քաղաքականությունը կյանքում ստուգված, սոցիալիստական կառուցման հաղթանակը մեր յերկրում ապահովող միակ ուղիղ քաղաքականությունն ե։ Մենք դարբնել ենք այդ զեկ-

քը, կոփել ու գրանով զինված յերկար տարիներ կա-
րող ենք առաջ գնալ: Մենք խոշոր ուժ ունենք, վորք
կայանում ե բանվոր դասակարգի գեպի կուսակցու-
թյունն ունեցած հավատի ու հաստատապես նրա հետե-
ղից գնալու մեջ: Դա յերեւմ ե նրանից, վոր ամեն
ձեռնարկության մեջ պայքար ե մղվում կուսակցու-
թյան գլխավոր գծի համար, յերեւմ ե ձեռնարկու-
թյուններում յեղած արտադրական վողեսրությունից,
յերեւմ ե գյուղացիության հիմնական մասի կուսակ-
ցության զեկավարությամբ գեպի կոլտնտեսությունն
յեղած շարժումից: Նույնիսկ նյութական հնարավո-
րությունների հարցը մեղ առաջիւ պես չի նեղում,
չնայած վոր լարված գրությունը շարունակվում է
դեռևս: Համենայն դեպս մեր ներքին միջոցներն այն-
քան են, վոր մենք հնարավորություն ունենք միմիայն
արդյունաբերության կապիտալ շինարարության մեջ
5 միլիարդ ներդրում կատարել: Դա ապացույց ե, վոր
մեր նյութական պայմաններն այժմ անհամեմատ լա-
վացել են:

Այժմ մենք, սոցիալիզմ կառուցողներս, առանձ նապես զգում ենք կովտուրական գիտելիքների պահապը։ Դա հիմնականն է ինչ մենք չունենք։ Դրա մասին ե խոսում արդյունաբերությունը, զրա մասին ե ասում գյուղատնտեսությունը, վորը մենք ուզում ենք արտադրական բարձր աստիճանի հասցնել, զրա մասին են վկայում խորհրդային լավ ապարատի կաղմակերպման գժվարությունները, զրա մասին են վկայում և այն գժվարությունները, վորոնց մենք հանդիպում ենք կոլտնտեսությունների կազմակերպման ձևապարհներ։ Ամեն տեղ մենք բացահայտ կորուստ-

Ներ ենք ունենում կուլտուրական կազմերի պակասության պատճառով, ամենուրեք մենք ստիպված ենք անխուսափելի ավելացիք ծախսեր անել մեր ընդհանուր և տեխնիկական հետամնացության պատճառով:

Խաղաղի կայանում ե այդ յետամնացությունը
հաղթահարելու, ճանապարհը մաքրելու մեջ—վերջնա-
կան հաղթանակի և սոցիալիստական տնտեսություն
կառուցելու համար։ Անշուշտ դա կկարողանանք կտ-
տարել, յեթե անհրաժեշտ հեղափոխականությամբ մո-
տենանք այս գործին, յեթե կուլտուրական հեղափո-
խության հարցեցը վճռականորեն դնենք։ Միայն այդ
միջոցով մենք հսարապորություն կունենանք կուլտու-
րական շինարարության խնդիրները լուծել արդյունա-
բերության կարեորագույն հարցերի և գյուղատնտե-
սության կոլեկտիվացման հետ զուգընթաց։ Յեթե դա
ապահովենք մեր քաղաքականությամբ ու վողջ պրակ-
տիկայով, ապա կուլտուրական շինարարության գոր-
ծը առաջ կտանենք։

Կարող են ասել՝ այս ուղղությամբ ինչ-ինչ աշխատանքներ տարվում են։ Իսկապես, սխալ կլիներ հաստատել, թե կուլտուրայի ասպարիգում մենք վոչինչ չենք անում ու կուլտուրական վոչ մի աճ չկա։ Պադել այդպիսի բան սխալ ու անմտություն կլիներ։ Յեթև մենք համեմատենք մեր յերկրի և առանձնապես բանվորի կուլտուրական մակարդակը մինչհեղափոխական շրջանի հետ, ապա հսկայական զանազանություն կտեսնենք։ Կուլտուրական շինարարության ասպարիգում մենք մեծ նվաճումներ ունենք, բայց դա գենես անբավարար եւ։ Սոցշինարարության տեսակետից դա այնքան քիչ ե, վոր մենք մեծ քար-

Ի անհրաժեշտությունն ենք զգում կուլտուրայի ֆրոնտում:

Կադրերի հարցը մեզ հաջողվում է լուծել արդեն մոտ մեկ միլիոն մարդ սովորում ե բարձր և միջնակարգ ուսումնական հաստատություններում: Վճռական է դրված նաև ընդհանուր պարտադիր ուսման անցկացման հարցը: Բայց դա դեռ քիչ է: Այս տեղ մի քանի ընկերներ իրավացի կերպով նշեցին, վոր այդ հարցը թեև դրված է, բայց անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դրա վրա: Խնդիրը քննության դնել դեռևս քիչ է, անհրաժեշտ է լուծել այդ խնդիրը, իրացնել: Մյուս կողմից ել պետք է ասել, վոր կուլտուրական աշխատանքի յենթակա չպիտի լինեն միայն նրանք, վորոնք ուսումնական հաստատություններում են գտնվում: Վայ, կուլտուրական աշխատանքի որյեկտ պիտի լինեն բոլորը՝ սկսած շարքային արդյունաբերական բանվորից ու կոլտնտեսականից մինչև բարձր դեկավարող կադրերը, Բոլորն ել կուլտուրական աշխատանքի որյեկտ պիտի լինեն: Այս ուղղությամբ պետք է լայն քրօնուով գնալ ու կուլտուրական շինարարության բոլոր բնագավառները ընդգրկել: Կուլտուրական աշխատանքի բոլոր ողակները պետք է ստուգել ու նրանց աշխատանքները կազմակերպել այնպես, վոր նրանք բղիկն վերակառուցման շրջանի ու սոցշինարարության նոր պահանջներից ու խնդիրներից:

Կադրերի պատրաստման գործին պետք է ուշագր նայել, վոչ այնպես, ինչպես անում ելինք՝ պատահմունքից պատահմունք: Պետք է ուշագրի ու սիստմատիկ ստուգել, արդյոք բարձրագույն ուսումնա-

կան հաստատություններում ամեն ինչ գոհացաւցիչ է, ուղիղ է դրված գործը և դասավանդումը համապատասխանում է արդյոք նոր շրջանի պահանջներին, արդյոք ինչքան կապված են մարքսիզմի - լենինիզմի տարրերն ու մեթոդները զանազան տեխնիկական գիտությունների դասավանդման հետ: Ինչ աստիճանի բավարարված է ուսանողը, վոր նա բարձր ուսումնական հաստատությունից հյուծված դուրս չգա, այլ առողջ աշխատող լինի, զինված գիտությամբ ու տեխնիկայով:

Ահա այս տեսակետից մենք պետք է վերանայնք ամեն մի բարձր ուսումնական հաստատություն, Մենք պետք է լուրջ կերպով հետաքրքրվենք և այն հարցով, թե նոր սերունդն ինչպիսի պատրաստություն և ստանում դպրոցներում:

Բացարձակ պետք է խոստովանել այն անթույլատրելի դրությունը, յերբ դպրոցական գործը համարյա ամբողջովին թողնված է ժողովաբաժններին: Մեզ մոտ, զպրոցներում, ուր դաստիարակվում ու կրթվում ե մեր նոր սերունդը, ամեն ինչ բավարար չե: Այստեղ վորոշ բան կա և հնից, վորը պետք է արտաքսել: Գոյություն ունի նաև այնպիսի գրություն, վորը յերբեմն հաշմանդամ է դարձնում աշակերտին: Դա արդյունք է այն բանի, վոր հին մանկավարժների մի մասը փորձում է առաջ վազել ու ինքն իրեն ցույց տալ լիակատար խորհրդային ու հեղափոխական մանկավարժ:

Դպրոցը նոր սերնդի դաստիարակման ու պատրաստման ամենակարևոր ողակն է: Դրա համար ել մենք ցածից վեր պետք է ստուգենք դպրոցը, գուրս

վատրենք այն, ինչ ավելորդ ե, լրացնենք պակաս-
ները և դպրոցը իր եյությամբ համապատասխան
դրության մեջ գնենք այն խնդիրների ու պահանջնե-
րի հետ, փորոնք առաջադրվում են սոցիալիստական
հասարակակարգի կառուցման դորձում:

Դիսներական շարժման խնդիրները հսկա նշա-
ղակություն ունեն: Ինձ թվում ե, վոր այդ խնդիր-
ությով մենք անթույլատրելի կերպով քիչ ենք հետա-
քրքրվում: Ինչպես ե զարգանում պիտոներական շար-
ժումը, ինչ ազդեցության ե յենթարկվում մանուկը
պիտոներ վաշտում: Մենք այս հարցերով քիչ ենք հե-
տաքրքրվում: մի շաբք փաստեր գալիս են ասելու այն
մասին, վոր շատ զեպքերում գործը այնքան ել լավ
դրված չե: Մըա համար ել այդ ողակը պետք ե
մանրազնին վերաստուգման յենթարկվի:

Մանկավարժական, դասաւուական կազմի վե-
րաբերյալ, — իսկ նրանց ձեռքումն ե գանվում դպրոց-
ներում նոր կադրերի պատրաստման դործը, — մենք
պիտի ասենք ու համառ կերպով հետեւյալ հարցա-
դումը պիտի անենք. «դուք շատ անպեսք հնու-
թյուններ ունեք, փորոնցով լեցնում եք աշակերտի
գլուխը. վերանայեք ձեր բազաժը և հարմարեցրեք
նրան նոր պահանջներին»: Դասավանդման, ուսուցման
փորակի հարցը վճռականապես պետք ե դնել. իսկ դա
հնարավոր ե միայն այն գեպքում, յերբ կուլտուրա-
կան աշխատավորների կողմից, լայն ալիքով, մի քա-
նի աստիճանով բարձրանալու պահանջ—աշխատանք
կակավի:

Ուսուցչության նյութական դրության մասին
խոսելը դեռևս քիչ ե: Խորհրդային իշխանությունը

դրանով շատ ե մտահոգված և հետագայումն ել կր-
մատահոգվի ուսուցչության նյութական դրությունը
բարելավելու խնդրով: Այդու հանդերձ մենք ուսուց-
չության առաջ հետեւյալ պահանջը պիտի առաջադրենք.
«ինչպես եք դուք ավելացնում, թարմացնում ձեր
պաշարը. սոցիալիստական շինարարության պահանջ-
ների համապատասխան վորակավորվում եք գուշա»: Դա
մեր կուլտուրական շինարարության հերթական խըն-
դիրներիցն ե:

Կարեւոր խնդիր ե արտադրության մեջ գտնվող
բանվորների շրջանում կուլտուրական աշխատանքի
կազմակերպումը: Բավական չե դեռևս բանվորներից
ընտրել ու բարձր ուսումնական հաստատություն ու-
ղարկել: Մենք պետք ե կազմակերպենք պրոետարա-
կան դիկտատուրայի շրջանի բանվորների դերի հիմ-
նական փոփոխության գործը: Այժմ բանվորը այլևս
իր բանվորական ուժը վորպես ապրանք ծախող չե,
ինչպիսին նա հանդիսանում ե կապիտալիստական
պայմաններում, նա ակտիվ սոցիալիստական կառու-
ցող ե: Մենք պետք ե կազմակերպենք բանվորների
սիստեմատիկ ուսման գործը տնտեսական, քաղաքա-
կան և առանձնապես տեխնիկայի հարցերի շուրջը-
դա. մեր վերակառուցվող արդյունաբերության կողմից
բանվորներին առաջադրվող պահանջն ե:

Նույնը մենք պետք ե անենք և կոլտնտեսու-
թյուններում. ծայրահեղ դեպքում, սկզբնական շրջա-
նում, դա պիտի անենք կոլտնտեսությունների ակ-
տիվի վերաբերմամբ. դրանից ե կախված և այն հար-
ցը, թե կոլեկտիվ տնտեսությունն ինչ չափով կկա-
ռողանանք բարձրացնել անհատական տնտեսություն-

ներից։ Կոլտնտեսականների կուլտուրական աճը կապահովի կոլտնտեսությունների արտադրական վերելքը։

Կուլտուրական աշխատանք պետք ե տարբի և յերրորդ ուղղությամբ՝ կուսակցության ու կոմյերիտմության շարքերի սիստեմատիկ ուսման ուղղությամբ։ Մենք այժմ ամեն մի կուսակցականի ու կոմյերիտականի առաջ հետեւյալ պահանջը պիտի դնենք։ «Դու կուսակցական չես, դու կոմյերիտական չես, իրավունք ել չունես մնալ կուսակցության և կոմյերիտմության շարքերում, յեթե սիստեմատիկ կերպով չես աշխատում և չես պատրաստվում կուլտուրական տեսակետից մի աստիճան վեր բարձրանալու»։

Միայն այսպիսի հեղափոխական դրույթով մենք կկարողանանք կուլտուրական հեղափոխության գործը հարկ յեղած չափով ու իրապես առաջ տանել։

Շատ գժվար ե մեր աշխատող կադրերի նկատմամբ դնել կուլտուրական աշխատանքի խնդիրը։ Դա յերկի ամենադժվար խնդիրն ե, զորովճետե նրանք նորմայի չյենթարկվող հասարակական աշխատանքով են զբաղված։ Բայց մենք համարձակ ու լուրջ պիտի դնենք խնդիրը և այս գծով։ մեր կուսակցական, տնտեսավարական, խորհրդային կադրերին պետք ե պարտադրենք ուսանել, աշխատել ինքն իրեն վրա, պետք ե պարտադրենք նրանց մի աստիճանով վեր բարձրանալու բնական ե, վոր վոչ մի անտեսավար չի կարող դեկավարել արտադրությունը, յեթե նա դեթ հիմնականում ծանոթ չի իր արտադրության խնդիրներին, յեթե նա չի իմանում արտադրության բարանը ստուգեր յեթե նա չի կարող ստուգել մասնագետին և չի

կարող ստուգել գծած պլանները։ Յեթե նա այդ աշխատանքներին ծանոթ չի, ծայրահեղ դեպքում ջանք չի թափում սովորել, ապա նա չի կարող և արտադրությունը դեկավարել։ Դա կամ դրա համապատասխան պահանջներ մենք պիտի դնենք խորհրդային, տնտեսական ու կոոպերատիվ աշխատանքների դեկավարների նկատմամբ են։

Կուսակցական կազմերը նույնպես պետք ե բարձրացնեն իրենց մակարդակը։ Կուսակցական դեկավարության կադրերը նույնպես պիտի աշխատեն իրենք իրենց վրա, իրենց մակարդակը բարձրացնելու վրա։ Այժմ չի կարելի կուսղեկավար լինել միայն կուսակցական ստաժի և կուսաշխատանքի փորձառության հնորհիվ։ Պետք ե բազմակողմանի կոփված, զարգացած լինել տնտեսությունը, խորհրդային շինարարությունը դեկավարելու համար։ Կուսղեկավարն իրերի ընդհանուր գրությանը ծանոթանալու տեսակետից ավելի բարձր պիտի կանգնած լինի, քան տնտեսավարը, քան խորհրդային դեկավարը։ այլապես, չհասկանալով մի շարք տնտեսական ու այլ խնդիրներ, նա չի կարողանա լավ դեկավարել։

Ահա թե ինչու կուսղեկավարի առաջ անմիջական խնդիր ե դրված՝ մի քանի աստիճանով բարձր կանգնել ու չբավարարվել տնտեսական կամ կուսակցական աշխատանքի ստաժով։ Դա այժմ արդեն անբավարար ե։ Զինավորվիր գիտությամբ և այն ժամանակ ուր լավ կառուցող, լավ դեկավար կլինես։

Կուլտուրական այս ամբողջ աշխատանքը չպիտի թուլացնի քաղաքական մակարդակը բարձրացնելու աշխատանքն ու նրա հանդեպ ունեցած ուշադրությու-

бюорбиджанеरи б այլ աշխատանքները թուլացնենք, ասկա
մենք չենք կարողանա ապահովել մեր հաղթանակը:

Ահա թե ինչու պետք է կարողանալ աշխատան-
քին գուգորդել ուսումը: Աւրիշ յելք չկա Ռևուլյը հե-
տաձգել այս կամ այն կամպանիայից հետո չի կա-
րելի: Պետք է կարողանալ մարտական տեմպերը մի-
ացնել ուսման ու կուլտուրական աշխատանքը տանե-
ցու հարավորության հետո:

Մի քանի ընկերներ ասում են. «յեկեք սկզբում

իսուսնք աշխատանքի սիստեմի մասին, պարզացնենք

աշխատանքի սիստեմը, աշխատանքը գիտականորեն

յաղագմակերպենք, իսկ հետո կիսունք սովորելու մո-

ւիճակի: Սա ինձ յերգ է: Աշխատանքի այդ ուսցիունա-

թեգացիացի մասին ինչքան մենք փորձեցինք, ինչքան

գողեցիկ հրահանգներ ավեցինք, դրանք հրահանդ ել

մասցին: Հասարակական աշխատանքի ուսցիունալիդա-

հիայի խնդրին այս ծայրից չպետք է մոտենալ: Փոր-

ձը ցույց ե տալիս, վոր զբանից բան չի դուրս դա-

լիս: Սամեն մի աշխատավի պետք է ստիպել որեկան

յերկույթերեք ժամ սովորել զբքեր կարդալ, իմբակ-
ներում, գասընթացքներում և այլ տեղ պարապեր Այդ

գնացքում նա ստիպված կլինի մտածել ժամանակի

մասցորդը արտադրականութեն ոգտագործելու մասին:

Մենք շատ ժամանակ ենք փչացնում զանազան

պատերի վրա: Ի՞նչպես վերացնել ժամանակի այդ

կորուստը Ռեգլամենտը չի ողնում: Բայց յերբ սովո-

րձը պարագիր կրաքննենք, այն ժամանակ մենք

հարկադրված կլինելք իտրին արտադրագրաբար աշխա-

տելու մասին, ժամանակի տնտեսության և նրա (ժա-

մանակի) հասարակական աշխատանքներում գործա-

որ, դա և դրա ուժեղացումն անհրաժեշտ է ամեն
դեպքում և միշտ ուղիղ հասկանալու և կուսակցական
քաղաքականությունը կիրառելու համար, դասակար-
գային թշնամուն ամեն դեպքում տեսնելու ու բոլ-
շևիլյան համառությամբ պայքարելու համար, կուս-
շարքերում ամեն տեսակի ոպորտունիզմի դեմ ներ-
կա ետապում աջ վտանգի, վորպես գլխավոր վտանգի
ու ամեն տեսակի «ձախուկների» դեմ պայքարելու
համար:

Ամենադժվարը այս հարցում, կրկնում եմ, դա
այն ե, վոր բոլորն ել ծանրաբեռնված են, բոլորն ել
ճախարակի նման պառյուտ են գալիս ու զանազան
նիստերում, խորհրդակցություններում են անցկաց-
նում ժամանակը: Մեր տեմպերը արագ են, հարվա-
ծային ու դժվար ե դրանց գուգակցել կուտուրական
աշխատանքը: Բայց ինձ թվում ե, վոր այդ դժվարու-
թյուններին մենք պիտի կարողանանք հաղթահարել: Աշխատանքն ու ուսումը պետք է լծակցել ու չսպա-
սել մինչև այս կամ այն ընկերը ուղարկվի բարձր-
ուսումն: Հաստատություն կամ արդյունաբերական ձե-
մարան: Նույնպես չի կարելի ասել: «յեկեք այսինչ
կամպանիան անցկացնենք, հետո կսկսենք սովորելու:
Դրանից բան դուրս չի գա:

Մենք մտել ենք աշխատանքի ու շինարարության
այնպիսի շրջան, ուր հարվածային, մարտական տեմ-
պերը պիտի շարունակվեն յերկար, մինչև վերջնական
հաղթանակ: Այսպիսի ուղղմական տեմպ պիտի լինի
ու պահպանվի, այլ կերպ չի յել կարող լինել: Յեթե
մի փոքր իսկ գեմոբիլացիայի յենթարկվենք ու մեր
տեմպերը, մեր աշխատանքի սիստեմը, կուսակցական,

զբելու մասին: Սովորելու այդ խնդիրը կծառայի վորպես գլխավոր միջոց ժամանակի անարտադրողական ժախսելու դեմ, կծառայի վորպես հզոր միջոց անհատը հանձնաժողովների վերացման գործում, հանձնաժողովներ, վորոնք շատ անդամ կազմվում են նրա համար, վոր անձնական պատասխանատվությունից ազատվեն: Նա մեր հասարակական աշխատանքը ռացիոնալիզացիայի յենթարկելու գլխավոր միջոցը կինսի:

Այս թե ինչու այս խնդիրը միայն խոսակցությամբ չափանի լուծված համարվի: Այս հարցը պլենումը քննություն պիտի հետեւ Յերկրկոմի Բյուրոյի և Հյուս: Կովկասի բոլոր կազմակերպությունների հակայական պրակտիկ աշխատանքը: Յերկրկոմի այս պլենումը ընդունելիք բանսանեին պիտի հետեւ պրակտիկ գործունեյության լայն պլանի մշակումը, բանաձեռում նշանակածը կյանքում անմիջականորեն իրադրժելու համար: Այդպիսի հակայական աշխատանք մենակ կատարելու համար կուտազուազը անդոր ե: Յերկրկոմին կից պետք ե հատուկ հանձնաժողով ընտրել ուր պետք ե աշխատանքի դնել մեր լավագույն կուտուրական ուժեղը:

Կուտուրական շինարարության հարցերի մեր ընտրությունից հետո պետք ե ապահովել նրա լայն տարածումն ու քննությունը: Մենք կուտածեսության շինարարության, գյուղատնտեսության վերելքի հարցերով զբաղվելը մկնեցինք նրանով, վոր ցնցեցինք ամբողջ յերկրը և ուշագրությունը լարեցինք զբաղաց, ստիպեցինք մարդկանց հասկանալ, վոր դպանք ընթացիկ մոմենտի կարեռագույն հարցերն են: Յեկեք այս հարցի լուծումն ևս ապահովենք հասարակական

լայն կամպանիայով: Ինձ թվում ե, վոր կուլտուրական շինարարության յերկրային համագումար հրավրելու առաջարկն ուղիղ ե: Անհրաժեշտ ե այս հարցի բարված ու լայն քննությունն և իրացումը ապահովել արհեստական միությունների, խորհուրդների, կուսակցական և տնտեսական կազմակերպությունների կողմից: Բազմազան ձևերով պետք ե ապահովել այս հարցի քննությունն ու իրացումը. պետք ե ցնցել բոլորին և մարդկանց ստիպել հասկանալ, վոր սոցշինարարության վերջնական հաղթանակը ապահովելու հիմնական պայմաններից մեկը կուլտուրական շինարարությունն ե:

Յեկեք, ընկերներ, ապացուցենք, վոր Հյուսիս. Կովկասյան կազմակերպությունը, ինչպես գյուղատնտեսության սոցիալիստական վերաշնուրական նույն պետ և այս բնագավառում կուսակցությանը կապահովենք անհրաժեշտ հաջողությամբ:

**ՀՅԱԽԻՍՏԱՆԻ ԿՈՎԿԱԾԻ ՄՈՅԵՍԻ ՍՏԱԿԱՆԻ
ՎԵՐՍԿԱԹՈՒՅՑՈՒՄՆ ՈՒ ԿՈԽՏՈՒՐԱԿԱՆ
ԱՃԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻԲԻՆԵՐԸ**

(Ընկերակի գեկուցման առքիվ ընդունված բանաձեռք)

1. Սոցիալիզմի ամբողջ ֆրոնտով ու տարածում հարձակումն իր վողջ սրությամբ առաջադրում է կուլտուրական շինարարության վճռական ու արևատական քեկման, մասսաների կուլտուրական աճող պահանջների համապատասխան՝ կուլտաշխատանքների տեմպերի արագացման և սոցիալիստական շինարարության արագ տեմպերին համահավասար—կուլտուրական կազմերի պատրաստման պրոբլեմի լուծման ինդիբները:

Սշմատանքի արտադրողականության բարձրացման խնդիրը, նորագույն տեխնիկայի ռացիոնալ ոգտագործման, սոցիալիստական արդյունաբերության արտադրանքի վորակի լավացման, կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման, կոլտնտեսությունների մեջ մտած նախկին մանր սեփականատերերի հոգեբանության վերափոխման ու նրանց առցիալիստական տնտեսության աշխատողներ դարձնելու խնդիբները, բյուրոկրատիայի դեմ պայքարելու, պետապարտը բարելավելու ու յերկրի պաշտպանու-

թյան գործի ամրապնդման հարցերը չեն կարող հաջող լուծում ստանալ, յեթե լայն ու ծավալուն կերպով կուլտուրական շինարարությունը չիրագործվի:

Կուլտուրական շինարարությունը հետագա մեր առաջինական ու պատմական նվազագույն ժամանակամիջոցում սոցիալիզմ կառուցելու արմատական պայմանն ե հանդիսանում:

Մրանից, իր ամբողջ ուժով, բղիսում է կուլտուրական աշխատանքների խնդրի, վորպես սոց. կառուցման հիմնական պայմանի հարցադրման ու լուծման անհրաժեշտությունը:

2. Հ.-Կովկասը, համատարած կոլեկտիվացման առաջավոր յերկրը, վորը սոցիալիստական շինարարության ասպարիզում զգալի հաջողություններ է ունեցել (սոցիալիստական արդյունաբերության տեսակարար կշռի ու գլխավորող դերի ուժեղացում, ջրագոր-միջակ տնտեսությունների յերկու յերրորդ մասի ընդգրկումը կոլտնտեսություններում), բոլոր հնարավորություններն ունի «առաջավոր կուլտուրական յերկր գառնալու ու կուլտուրական հեղափոխության մարտիկների առաջաշարքում կանգնելու» (Յերկր. 6-րդ կուսամագումար):

Վճռական դիմագարձը գեափի կուլտաշինարարությունը Հ.-Կովկասում պիտի արտահայտվի նրանով, վոր կուլտուրական հարցերը վերացական ու «ընդհանրապես» չդրվեն, այլ ուղղակի բիթին սօցիալիստական վեցակառուցման կոնկրետ խնդիրներից, վոր այդ հարցերը, ինչպես նաև Հ.-Կովկասի խնդումարացման, ու կոլեկտիվացման հարցերը, յելմեն լենինյան դրվագներից, այն և՝ կուլտուրական հեղափոխություն

կատարելու համար անհրաժեշտ ե նյութական արտադրության զարգացման վորոշ մակարդակը յերկրի ինդուստրացման զարգացումը, վորով պայմանավորվել ու հնարավորություն ե ստացվել ներկայումս, յերբ սոցիալիզմի շրջանն ենք վոտնակոխել, տարածուն կերպով կուլտուրական շինարարության հարցերը դնեմ:

3. Պենսումն անբավարար համարելով կուլտուրական շինարարության տեմպերը, խոկ կուլտ. հարցերի թերագնահատումը բացարձակ ոպորտունիզմ համարելով, գտնում ե անհրաժեշտ, վոր բոլոր կուս. կազմակերպությունները կուլտուրայի հարցերը մշտական ռւշադրության առարկա դարձնեն և այդ հարցերի շուրջ լայն բանվորական, կոլտնտեսական ու չքափորմիջակ մասսաների մորիլիզացիա անեն: Իրականում ապահովելով ու զեկավարելով մասսաների պայքարը կուլտուրայի համար, —իսկ դա դասակարգային թշնամուն հաղթելու կարևոր պայման ե —աշխատել, վոր տմէն մի կուտականական բջիջ արդյունաբերական ձեռնարկության, խորհրդային անտեսության, կոլտընտեսության մեջ, զյուղում, առևում, կուլտուրական նեղափոխարքան կազմակերպիչ դառնա:

4. Տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա կատարվող արդյունաբերության սոցիերակասուցման խնդրի լուծումը, դասակարգային կովի սրացումը մեր յերկրում և հականեղափոխական մասարարական մի շարք ակտերի արտացոլումը այդ դասակարգային կռվի վրա, համառօրեն պահանջում են բանվոր դասակարգի և արդյունաբերության մեջ

աշխատող կուս. կաղըքերի տեխնիկական ու կուրառք-կրթական մակարդակի արագ բարձրացում:

Ընդ սմին, պլենումը անհրաժեշտ ե համարուժ ընդլայնել ԲՇՈՒՀ-երի*) ու տեխնիկումների ցանցը այն հաշվով, վոր արդյունաբերության ամբողջ զեկավարող կազմը, ըստ արտադրական հատկանիշների դիմերենցիացիայի, ընդգրկվի նեռակա ուսուցմամբ:

Այսու հանդերձ, անհրաժեշտ ե զարգացնել կուլտուրացիոն (խորհրդատու) աշխատանքը, վորի կատարումը հանձնարարել կուսակցության անդամներին ու բանվոր դասակարգի գործին նվիրված անկուսակցական մասնագետներին: Արտադրության մեջ աշխատողների համար բոլոր խոշոր ձեռնարկություններին, արդյունաբերական միավորումներին ու զեկավար կազմակերպություններին, տեխնիկումներին ու ԲՇՈՒՀ-ներին**) կից բոլոր կարևորագույն տնտեսական-քաղաքական ու տեխնիկական հարցերով զբաղվող, կվաղիֆիկացիայի բարձրացման նպաստող կոնսուլտացիոն բյուրոներ կազմակերպել:

Յենելով լայն բանվորական մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման ու տեխնիկական գիտելիքների տարածման անհրաժեշտությունից, վորսիսին բղխում ե արդյունաբերությունը նորագույն տեխնիկայով կահավորելու և աշխատանքի կոմունիստական մեջերի տարածման խնդիրներից, հանձնարարել արհեստական միությունների և ժողովրդ:

*) Բարձրագույն ուսումնական հաստատություն (թարգ.)

**) Բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատություն (թարգ.).

անսեռության յերկրային խորհրդների ֆրակցիաներին մշակել միջոցառումների մի սխտեմ, վորն ամեն մի բանվորի սովորելու հնարավորություն ապահովի (դա ունթացքային, խմբակային, ակմբային աշխատանքների կանոնավորումն ու բարելավումը, ռադիոյի ոգտագործումը և այլն). միաժամանակ նախառեսնել արդյունաբերության մեջ ներզրավորող նորեկ բանվորների պատրաստման ու վորակավորման անհրաժեշտությունը:

Մասնավորապես պետք է վերակազմել ակմբների ու արդյունաբերական ձեռնարկությունների մեջ առարվող կուշտուրական աշխատանքը՝ բանվորների մեջ քաղաքական ու տեխնիկական դիտելիքների տարածման, նրանց կվալիֆիկացիան բարձրացնելու և ովյալ պրոտոքորության արտադրական պրոցեսների հետ կապ փուլու ուղղությամբ։

Բանվորի ու վարչատեխնիկական պերսոնալի ցածր վեր նոր պաշտոնի առաջ քաշումը պետք է, վորպես կանոն, կատարվի այն զեղքում, յերբ տուաջքազողը նոր աշխատանքի լուրջուրակ կատարում առանփող ուսուցման վորոշ զրջանից և անցել։

Միջոցառումների այս սխտեմը հարմարեցնել իրենց պատրաստությամբ տարբեր բանվորական խրմբակների պահանջների ու նրանց արտադրական պայմանների հետ (Դժամյա բանվորական որ, անընդհանուրաթ, բազմանդամ ընտանիք)։ Աշխատանքի այս փորձը ուսումնասիրելու ու նրա լավագույն որինակները չ-կովկասում տարածելու համար, Արհեստական։ Միությունների Յերկր, Խորհրդին առաջարկել մի քանի խոշոր ձեռնարկությունների ու շախ-

տերի աշխատանքը իր անմիջական ու սկսանմատիկ հոկտեմբերի յենթարկելը

Արհեստ, Միությունների Յերկրային Խորհրդի, Յերկրության կատարելու համար կատարել աշխատանքի միջոցառումների կատարել խորհանաեառությունների և մեքենա-տրակտորային կայունների նկատմամբ։

5. Կոլտնաեառությունների ամրապնդումը պահանջում է կոլտնաեառականների, առաջին հերթին ակտիվի մեջ, լայն, իրապես մասսայական ու լարված կուլտուրական աշխատանքը տանելը կուլտուրական աշխատանքի միջոցով կոլտնաեառում պետք է գաստիարակել ու ծնեցնել սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, վերացնել մանր-բուրժուական տարերացնության արտահայտությունները, տեխնիկական ու զյուղատնաեառական գիտելիքներն ավելացնել և կուլտուրական մակարդակը բարձրացնել այնպիսի աստիճանի, վորպիսին անհրաժեշտ և զյուղատնաեառությունը մեքենացնելու, խոշոր մեքենաների կիրառում կատարելու ու խոշոր կոլեկտիվ աշխատանքությունը զիտական հիմունքներով զեկավարելու համար։

Հանձնաբարել Յերկրկորանտեսմիության, Յերկրությամբնի, Տրակտորկենարոնի ֆրակցիաներին, այս ուղղությամբ գործնական միջոցառումներ մշակելու, տուանձնապես ուշադրություն զարձնելու մեքենատրակտորային կայաններով սպասարկվող ու այլնների վրա, ոգտագործել արդեն հիմնավորված մասսայական գասընթացքային աշխատանքների փորձը և առաջին հերթին ապահովել ակտիվի, բրիգադաների պատրաս-

ման գործը: Այս միջոցառումների կատարումը ապահովել այն հաշվով, վոր դրանք մինչև գարնանացանի սկսվելը իրագործված լինեն:

Անդրեեի անվան գյուղատնտեսական ճեմարանը վերակազմել ու դարձել կոլտիսեսությունների համար դեկավարող կադրեր պատրաստելու կենտրոն: Նրա կազմի մեջ մտցնել ու նրա բաժանմունք դարձնել լեռնեցիների և կրամնոդարի պրակտիկ ինստիտուտները: Ճեմարանի ուսանողներին աշխատանքի համապատասխան ճյուղերով մասնագիտություն տալու համար, Հ.-Կովկասի առավելապես մեծ խորհենք. յեկանինեսություններու քաց անել նեմարանի ուսումնա-արտադրական բաժանմանենքներ:

Հանձնարարել Յերկրիոդրամներն, Յերկրկողուն-ահսմիության, Հողանտառմիության՝ ճեմարանի վերակազմումը մինչև 1931 թվի հունվարի 1-ը կատարել, նախատեսնելով սովորողների թվի զգալի ավելացում:

Նշելով կոմյերիտմիության ու յերիտասարդության խոշոր դերը կոլտնտեսությունների շինարարության մեջ, պլենումն անհրաժեշտ ե համարում առանձնահատուկ ուշագրություն դարձնել կոլտնտեսությունների մեջ յեղած կոմյերիտականների ու յերիտասարդության կուլտուրական և առանձնապես աելինիկական մակարդակի բարձրացման վրա:

Կոլյերիտդպրոցը (ԱԿՄ) վերածելով կոլտնտեսությունների համար պիտանի կադրեր պատրաստելու միջոցի, անհրաժեշտ է ձգտել վոր ամեն մի խոշոր ֆուլտնտեսության կից ու նրա միջոցներով, պարտադիր կերպով, կազմակերպվի դպրոց կամ

ծայրահեղ դեպքում, կոլանտեսական յերիտասարդություններին տեխնիկապես պատրաստելու դասընթացքներ բացվեն:

Քաղաքային արդյունաբերության, ինչպես նաև խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների մեջ կնոջ գերի ավելի ու ավելի մեծանալը ՀՀ-կովկասի կուսակցական, խորհրդային ու տնտեսական կազմակերպությունների առաջ զնում ե կին-աշխատավոր մասսաների քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացման ու աշխատանքի սոցիալիստական ուսուակությունները կանանց մեջ տարածելու համար հատուկ միջոցառումների անհրաժեշտության խնդիրը:

Դեպի կուլտուրական շինարարության հարցերը իրական դիմադրած անելու վճռական մոմենտներից մեկը դա կուսակցության ու կոմյերիտմիության անդամների մասսայական-սիսեմատիկ ուսումն է:

Կուսակցության ու կոմյերիտմիության անդամների ճնշող մեծամասնությունը կարողանա բարձրացնել իր կուլտուր-քաղաքական մակարդակը միայն այն դեպքում, յեթե ուսուցումը ամենորյա աշխատանքից կտրված չտարփի: Սրանից յելնելով, պլենումը առաջարկում ե Յերկրկոմի Բյուրոյին, անխօնի բոլոր կուսակցականների ու կոմյերիտականների քաղաքական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու կոկրետ միջոցներ ու ձևեր մշակել, վորոնք պահովելով քաղաքական մակարդակի բարձրացումը, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ու զյուդանական պարտադիր միամումն ևս նախատեսնեն:

Անհրաժեշտ համարել հանգստյան որերի ամենախիստ պահպանումը և այդ որերի մաքսիմալ ոգտա-

գործումը ուսման համար ապահովել. նույն նպատակի համար որեկան ամենապակասը շ ժամ պետք է հատկացներ Այս փորոշման գործադրումը պարտադիր դարձնել Յերկրկոմի, Յերկրացին Վերսուլդիչ Հանձնաժողովի, ույլումների, բջիջների բյուրոների անդամներից սկսած:

Յերկրկոմի Բյուրոյին հանձնարարել ձևեր մշակել այս փորոշման կիրառումը ամեն մի կուսակցականի և կոմյերիտականի կողմից կատարելը սիստեմատիկորեն ստուգելու համար:

Ուսման անշխացումը ուրարեն պետք է կազմակերպի կերպումներն անհամար գանգան ձևերի մասին կայացրած փորոշման հետ:

7. Վերոհիշյալ միջոցառումների կիրառումը աշխատավորների կուտուրական մակարդակի բարձրացման վրա աշխատող տարրեր կազմակերպությունների աշխատանքների կանոնավորումն ու փոխադարձ համաձայնեցումն ե պահանջում: Նրանց ամբողջ գործունեյությունը, ինչպես նաև ակումբների, սոցկուտուրայի տների, խճիթ-ընթերցարանների, ուղղուենարանի և այլ հաստատությունների ու մարմինների աշխատանքը այս փորոշման հիման վրա պետք է վերակազմել:

Կենտկոմի՝ կուլտուրական աշխատանքի միամնակոն պլանի մասին կայացրած փորոշման համաձայն, յերկրացին, ույլումնական, դործարանային, գյուղական մասշտաբով պետք է այնպիսի պահներ կազմել, վրանց մեջ ժողուածավորության որդանների, արհմիությանների, կոռպերացիայի ու այլ հասարակական կազմակերպությունների միջոցով տարվող կուլտուր-

կրթական աշխատանքների միամնականությունը նուխատեսնված լինի: Ըստ սմին, կուլտուրական միամնական պլանի ստեղծման ու կուլտուրական շինարարության շուրջը մասսայի մորիլիդացիայի գործում ժողովրդական լուսավորության յերկրացին խորհրդի դերն ու նշանակությունը զգալիորեն մեծացած լինի:

Կուսակցական ու հասարակական կազմակերպությունների լուրջ խնդիրներից մեկը պիտի լինի այդ պլանի իրագործումը ապահովող նյութական միջոցներ ու պայմաններ ստեղծելը (շենք, գիրք, ձեռնորկ և այլն), փորի համար անհրաժեշտ և հենց իրենց, աշխատավորների նյութական միջոցների (կուտանսությունների հատկացումներ, կուլտֆոնդ և այլն) արտամուգումը այդ գործին. միաժամանակ պետք է այդ միջոցների ոգտագործման ու ծախսման հաստակական պլանն ու հակողությունը ապահովելը:

8. Կուսակցականների, կոմյերիտականների, բանգօրների ու կուտանսականների ընդհանուր ու անխոտիր սովորելու խնդիրը լուծելու համար, պլենումը անհրաժեշտ և համարում գպրոցներում ու խմբակներում փորձես զասատու, զասախոս, կոնսուլտանտու զիկավար աշխատանք կատարելու կարողություն ունեցող բոլոր կուլտուրական ու մասնագետ ուժերի վակատար հաշվառք ու ուժերի դրանորում կատարել: Այս ամբողջ աշխատանքը տանել վերաբեր մեծ նաև աշխատական-խղանական կամպանիա այն հաշվով, փոր կուլտուրական ուժերն ու խորհրդային իշխանության նվիրված մասնագետներն ըմբռնեն նրանց վրա զրված խնդիրների ու պարտականությունների մեծ նշանակությունը, այն և աշխատավորների ուսու-

Նշելով մանկական կոմունիստական շարժման խոշոր նշանակությունն աճող սերնդի դաստիարակման գործում, պիեսումը անթույլատրելի յէ համարած կուսակցական, արհեստակցական, խորհրդային և այլ կազմակերպությունների կողմից դեպք պիոնիքական կազմակերպություններն ունեցած անուշադիր վերաբերմունքը:

Պիեսումը պարտադրում է կուսակցական և կոմժական կազմակերպություններին ամենակարճ ժամանակամիջոցում սիններական կազմակերպություններն ապահովել լուրջորակ զեկավար կազմակերպությունների աշխատական աշխատական զեկավարություն ունենալ այն հաջողվ, վոր սիններական կազմակերպությունների աշխատանքի սիստեմն արմատական կերպով բարելավվի և մասնակիության սոցիալիստական շեմների նախարարության կոնկրետ հարցերի վրա կառուցելը, ինչպես նաև ընդհանուր պարտադիր ուսման և զըդութիւնի պոլիտեխնիկացիայի իրագործումը ապա-

10. Պիեսումն առաջարկում է անդրագիտության վերացումը Հյուսիսային կովկասում հիմնականում վերացնել մինչև 1931 թ. մայիսի մեկը, անդրագիտության վերացումը կուլտուրապես հետամիաց ազգային մարզերում ու ազգային ույլուներում վերջանել մինչեւ 1931 թվի վերջը:

Պիեսումը, այսու հանդերձ, առաջարկում է առաջրությունը կենտրոնացնել կիսագրագիտության զեմ մդվող պայմանի վրա, տալով նրան հառարակական քաղաքական կամպանիայի բնույթի, նիսագրագիտությունը վերացնելու ճշգրիտ պլանը կազմելու

յենել այն դրույթից, վոր Հյուսիսային կովկասը համատարած գրագիտության յերկիր դարձնելու գործը իրավես ապահովվի:

11. Կարմիր բանակը պատրաստում է պրոլետարական հեղափոխության զինված պաշտպան ու կուլտուրական մարտիկ. այդ պատճառով, անհրաժեշտ և նրան գրագետ մարտիկ տալ ու ազատել Կարմիր բանակը անզրագիտության վերացմամբ զբաղվելու գործից:

Պարտագրել աեղական մարմիններին, առաջին հերթին 1909—10 թվերի ծնվածների, տերըիտորիալ դիվիզիաների փոփոխական կազմում հաշվող յերիտասարդների անգրագիտությունը վերացնել:

Հյուս. Կովկասի սազմական շրջանի քաղաքական մասին առաջարկել միջոցներ ձեռք առնելու, վոր արձակված ամեն մի կարմիր բանակային պատրաստված լինի քաղաքում թե գյուղում մի վորեիցե կուլտուրական կամ հասարակական աշխատանք տանելու, Դրա նախապատրաստական աշխատանքը պետք է տարիի Կարմիր բանակում գտնված ամբողջ ժամանակաշրջանում, բայց վոչ ի վեաս հիմնական աշխատանքի — սազմական պատրաստման:

12. Բանվոր գասակարգից կազմեր պատրաստելու մասին կենտրոնի աված հրահանգների հետեղական կատարմամբ, ոպորտունիստների և պրոֆեսորական կազմի գասակարգային թշնամի հատվածի ընդդիմադրությունը հաղթահարելով, Յերկարին կուս կազմակերպությունը ԲՈՒՀ-երի ու տեխնիկումների ըստ արտադրական հատկանիշների վերակազման արտադրական պրակտիկայի կազմակերպման և ուսու-

նողների կոնտինգենտի լայնացման ու նըանց սոցիա-
լական կազմի բարելավման գործում զգալի հաջողու-
թյուններ ունի:

Պլենումը գտնում է, զոր ԲՈՒՀ-երի և տեխնիկում-
ների վերակազմումը վերջնականապես ի կատար ա-
ծելու հերթական ինդիքները կայանում են հետեւա-
շում՝ ուսուցման վորակի բարելավում, վճռական ու
տարածուն պայքար մեզ թշնամի ու վլսսարարական
իդեոլոգիայի դեմ, արտադրական պրակտիկայի հետա-
գա զարգացում ու կատարելազործում, ինչպես նաև
այստեղ, ուր ոեալ հնարավորություն կա ու իրապես
առահօվկած կլինի անհրաժեշտ կադրերի պատրաստու-
մը—ԲՈՒՀ-երի ու տեխնիկումների վերածումը գործա-
րանների և խորհրդային տնտեսությունների ուսում-
նա-տրտադրական ցեխերի:

Պլենումն առաջարկում է ուսումնասիրել ուսում-
նա-տրտադրական կոմբինատների (Սելմաշսարոյ, Շի-
նարարական), ինչպես նաև փորձնական - ցուցադրա-
կան խորհումներության մեջ ԲՈՒՀ-ի կազմակերպման
փորձերն ու նվաճումները և դրանք փոխադրել Հյուս.
Կովկասի մեծ ձեռնարկություններն ու խորհում-
նությունները:

13. Հյուս. Կովկասի կադրերի պատրաստման
պլանը համարելով վորպես կադրերի պատրաստման
գործի պլանացման առաջին քայլը, պլենումն առա-
ջարկում է վերանայել այն ու սոցշինարարության
բարձր տեմպերից յենելով՝ վորոշել Հ.-Կովկասի հա-
մար անհրաժեշտ կադրերի ճշգրիտ քանակը:

Պլենումը Հ.-Կովկասի տնտեսական, արհեստակ-
անական կազմակերպությունների ու շաղագության ե-

հրավիրում ֆաբգործումների (ՓՅՄ) և մասսայական
պրոֆեսիաների ուսուցման դպրոցների (ՓՅՄՊ)
ցանցի լայն զարգացման ու ֆաբգործումների կապի-
տալ շինարարությունն ապահովելու անհրաժեշտության
վրա:

Պլենումն, ազգային մարզերի համար կադրեր
պատրաստելու հարցի մշտիումն և տեղական կուսկազ-
մակերպությունների գեպի այդ հարցն ունեցած ու-
շագրությունը թույլ և անբավարար ե համարում:

Պլենումը Յերկրգործկոմի քրակցիային ու ազ-
գային մարզերի կուսկոմիտեներին պարտադրում ե
անհապաղ պրակտիկ միջոցառումների կատարումը
ընդլայնել ու Յերկրկոմի ազգային մարզերի համար
կադրեր պատրաստելու մասին ունեցած վորոշումներն
իրականացնել:

14. Մասսաների ուշագրության մոբիլիզացիան
ու ակտիվության բարձրացումը կուլտուրական շինա-
րարության հաջող ընթացքի կարևոր պայմանն և հան-
գիսանում:

Գյուղագորհողներին կից, կուլտուրական հարցերի
գործով հա ոուկ լիադորներ (կուլտիվագորներ) ունե-
նալու և կուլտիվնարարության գծով պարտադիր մի-
ջոցառումների սիստեմ (կուլտմինիմում) կիրառելու
մասին Յերկրգործկոմի վորոշումներին հավանություն
տալով, պլենումն առաջարկում և խորհրդների վեր-
ընտրության ժամանակ—

ա) այդ միջոցառումների նշանակության մասին
բացատրական աշխատանք տանել,

բ) ընտրել այնպիսի կուլտիվագորներ, վորոնք

գյուղում կուլտուրական հեղափոխության կատարումը ապահովեն,

զ) ամեն մի գյուղի համար մշակած կուլտումինիմումը վորպես նակաղ տալ նորընտիր գյուղխորհըրդին:

Փողլուսյերկրխորհըրդին պարտադրել դեկավարություն և հսկողություն ունենալ կուլտիկագորների աշխատանքների վրա և կուլտումինիմումի իրականացման գործում:

Պենումը հանձնարարում ե Յերկրկոմի Բյուրոյին, նախապես լայն բացատրական կամպանիա տանելով և յերիտասարդների ու կանանց ուշադրությունը այս աշխատանքների վրա հրավիրելով գործարաններում, շախտերում, խոշհանտեսություններում, գյուղերում ու առուներում, — կուլտուրական շինարարության խնդիրների մասին բանվորների ու գյուղացիների յերկրային համագումար հրավիրել:

Պենումը հատկապես ընդգծում ե արհմիությունների, վորպես պրոլետարական կազմակերպությունների, կուլտուրական հեղափոխության իրականացման գործի մեջ ակտիվ մասնակցություն ունենալու կարևորություն ու խնդիրը:

15. Գիտական կազմեր պատրաստելու ասպարիզում վորոշ առաջնապացումը նշելով (մարքսիզմի-լենինիզմի չյոււս, կովկասյան ինստիտուտի բացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ինստիտուտի, լեռնեցիների գիտական-հետախուզական ինստիտուտին կից ասպիրանտուրայի ստեղծումը, կարմիր պրոֆեսուրայի յերկրային բաժանմունքի բացումը, ԲՈՒՀ-երին կից ասպիրանտուրայի

ստեղծումը), պլենումը անհրաժեշտ ե համարում չյուսիսային կովկասի կարիքը գիտական աշխատողներով ու գիտական հաստատություններով ապահովելու համար մշակել միջոցառումների սիստեմ, վորպիսին վելու համար մշակել միջոցառումների հ. կովկ. կոնկրետ խնդիրներից ու կուսակցական կազմերի մարքսիստական-լենինյան պատրաստության բարձրացման պահանջներից:

Պենումը անհրաժեշտ է համարում, վոր Հյուս. կովկասի գիտական-հետախուզական աշխատանքների տեմպերն արագ զարգացնող արդյունաբերության ու գյուղատնտեսության սոց. վերակառուցման պահանջներից յենեն ու նրանց աճմանը համապատասխանեն:

16. Կուլտուրական շինարարության միջոցառումների գործադրումն արագացնելու, կուլտուրական աշխատանքների միամնական պլան մշակելու և այդ պլանի իրազորման վրա սիստեմատիկ հսկողություն ունենալու համար, Յերկրկոմի Բյուրոյին հանձնարարել Յերկրկոմին կից մշտական հանձնաժողով ստեղծել:

17. Նշելով Հյուս. կովկասի մամուլի բուռն աճը, պլենումը գանում ե, վոր մամուլի (առանձնապես ուղանական և ազգային թերթերի) կուսակցական-քաղաքական մակարդակի բարձրացման և Հյուս. կովկասի տնտեսական ու կուլտուրական շինարարության մեջ ունեցած դերի ուժեղացման հիմնական պայմանը կայսնում ե, — կենտկոմի թերթերի կարգային մասին ունեցած վերջին վորոշումների համարերի մասին ունեցած վերջին վորոշումների համաձայն, մամուլի կուսակցական դեկավարության և մամուլի կազմերի լայնացման ու ուժեղացման մեջ:

Հյուս. կովկասի մամուլը պետք ե, վոր ուղանակություններում, ազգային մարզերում, ձեռնարկություններում,


բում ու կոլտնտեսություններում տարվող կուլտուրական աշխատանքների լուսաբանումը կատարի ավելի լայն չափով։

«Հյուսիսային կովկաս» և մյուս բոլոր ազգային հրատարակչություններին պարտադրել պլենումի վորումների հիման վրա, 1931 թ. հրատարակչական պլանները վերանայել։

Ընդ սմին, անհրաժեշտ համարել թղթի և պուլպաֆի արդյունաբերության զարգացման 5-ամյա պլանը հատուկ քննության յենթարկել։

Կուլտուրական շինարարության մեծ խնդիրների լուծումը բոլոր կուսակցական կազմակերպություններից պահանջում է վճռականություն, համարձակություն, լայն թափ ու բոլշեկյան հաստատակամություն։ Բայց և այնպես, պլենումը նախազգուշացնում է՝ աճապարանքից, անհիմ պրոֆեկտորականությունից, բոլոր հարցերը մի անգամից լուծելուց, փորձի անփստեմ ուսումնասիրումից, այլ և այլ միջոցառումների փորձը պրակտիկայում չառուցելուց, մասսաների կողմից նախապես չքննելուց խուսափել։

Պետքումն ընդգծում է, վոր կուլտուրական ֆրոնտում իրական ու կայուն հաջողությունների մենք կհանենք միմիայն այն դեպքում, յերբ կուսակցության գլխավոր գիծն անշեղ կկիրառենք, յերբ յերկու ֆրոնտում անխնա կափվ կմղենք ուղղութունիզմի դեմ, գլխավոր վտանգ ներկայացնող աջ թեքման ու «Ճախ» ոպորտունիզմի դեմ, յերբ անխնա պայքար կմղենք յերկերեսության, աջ ու «Ճախ» անսկզբունք բլոկի և թեքումների հանդեպ հաշտութական դիրքավորման դեմ։



27. Ա. Մինարյան, — Խորհրդակի վերընտրությունների հիմական խոդիրները 7 »
28. Խորհրդակի վերընտրությունների գործնական խոդիրները 8 »
29. Ամրագովի խորհրդակի (պիտիա) 10 »
30. Ռամիլինվ. — Կույալության մերացումը և Խորհրդակի խոդիրները 7 »
31. Բանանեցյան, — Համառուրած կույելուացման ամորտումը և 1931 թ. գործնականության խոդիրները 10 »
32. Լուսինվ. — Բազմելույան յերկրորդ զարգան մարտական խոդիրները 5 »
33. Վանիքիյան. — 1931 թ. գործնականությ կումպանիայի գործ հաղան խոդիրները 5 »
34. Նոր կենցաղի յերգեր 20 »
35. Առա Լուսինվ. — Բանառակցություններ 20 »
36. Լ. Զաշչային. — Հացահատիկի Փարբեկ («Դիզան») սովորությունները 10 »
37. Ա. Ա. Ալեքսեյև. — Խորտուրական շինարարության խոդիրները 7 »
38. Գ. Յալցին. — Պալմիրի վոհմուկը պիտիա 3 դուր 25 »

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս, Կովկասի հայությունությունի առաջիայինի անդամների գործադրությունը
2. 16-րդ կուսամագրությունները
3. Հյուսիսային կովկասի հոգածությունը՝ արդյունաբերությունները
4. Խոզարությունների կովկասի հոգածությունը կովկասում
5. Կերպ հարցը և սիլուացումը
6. Կովկասի գործադրության ամագ բանդուների պարտականությունները
7. Ջենարկի օխախոսակործության համար
8. Տաղարարություններ
9. Բանառարություններ
10. Բանառարություններ
11. Աշխատավորի կովկասի բանդուների բաժանումը կովկասությունությունի կովկասի պահանջման կովկասի փոքրը Հյուս, Կովկասում
12. Տրանսունդը և կուսակցության խոդիրները
13. Առմանական գործադրության համար

Դիմիկ՝ Ռոտով - Դ., Բուդենովսկի պր., 60, Կրայնացիզատ.

18476

ԴԻՆ Ե 7 ԿՈՊ.

ԱՅ1

ՏՐ1

А. А. НДРЕЕВ
Задачи культурного строительства
На армянском языке

«Ազգային գրադարան



NL0185336

